

## [ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԵԼՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ]

Ընկերներ, ինձ այժմ հետաքրքրում են ճարտարապետության պատմության որոշ հարցեր:

Վերջերս թերթերում տպագրվեց իտալացի չորս ճարտարապետների հաղորդումը իրենց հայրենիքում, [թե] հայ հին ճարտարապետության պատմության գծով արդեն 50 տարի է, ինչ ոչինչ չի արվում: Ու թերևս պարզ է, որ նրանք նկատի ունեն 1918 թվականին լույս տեսած Հովսեփ Ստրժիգովսկու «Հայ ճարտարապետությունը և Եվրոպան» հանրահայտ աշխատությունը:

Այդ մի մասով ճշմարիտ է, մյուս մասով՝ ոչ: Ոչ այն պատճառով, որովհետև 1918 թվականից հետո լույս են տեսել մոտ մեկուկես, երկու տասնյակի հասնող հետազոտություններ, մյուս կողմից մեր իտալացի հյուրերը ճիշտ են այն առումով, որ այդ կարգի գիտական աշխատություն, ինչպիսին Ստրժիգովսկու գիրքն էր, լույս չի տեսել: Դեռ ավելին, եթե Ստրժիգովսկու գրքով հայ ճարտարապետության դերը այս դարակգրում համաշխարհային առումով բարձրացվեց, արժեքավորվեց, ցույց տրվեց նրա դերը եվրոպական ճարտարապետական մի երկու ոճերի առաջացման համար, ապա մյուս կողմից լույս տեսան աշխատություններ, որոնք փորձեցին ի չիք դարձնել Ստրժիգովսկու ձեռք բերած նվաճումները և նույնիսկ հայ ճարտարապետության փոխարեն առաջին պլան մղել, նրա խաղացած դերը վերագրել ճարտարապետության մի այլ շրջանակի: Եվ այս ամենը կատարվեց ոչ թե ազգային շրջանակներում՝ այլ համաշխարհային. այսպես ասած «Ստրժիգովսկուն ջրող» աշխատությունները տպագրվեցին եվրոպական լեզուներով: Արդեն քառասուն տարի է, որ սիստեմատիկաբար, պլանային ձևով տարվում է այդ գործը, որի պսակը հանդիսացավ Չուբինաշվիլու հայ ճարտարապետությանն ու արվեստին վերաբերող ավելի քան արտասովոր աշխատությունը տպագրված իտալական արվեստագիտական հանրագիտարանում:

Տեղի ունեցածի մասին մեր թերթերում տպագրվեց Թբիլիսիից տրված հաղորդագրությունը այն ժամանակ միայն, երբ հանրագիտարանն արդեն հրապարակի վրա էր:

Ինչ խոսք, որ այս իրողությունը հուզեց շատերին, ոմանք փորձեցին իրենց ուշացած հնարավորությունները «կանխելու» արդեն կատարվածը, և այնուամենայնիվ դարձյալ «անձնական» հնարավորությունների չափով, և ոչ ավելին, կարծեք թե խոսքը չի վերաբերում ժողովրդի ամբողջական կուլտուրային:

Սակայն եկեք թողնենք օտարին, որն իր օտարի գործն է կատարում, դրանով էլ հաստատում իր օտար և ո՛չ հարազատ լինելը: Իրավունք ունեի՞նք հուզվելու, ո՛չ: Ո՛չ, որովհետև այն, ինչ այնտեղ գրված է, գրվել է տասնյակ տարիներ առաջ, տարբեր հրատարակություններում, տարբեր առիթներով: Օրինակ, նույն բանը չի՞ գրված նույն հեղինակի կողմից Սասունցի Դավթի հազարամյակին նվիրված ժողովածուում, լույս տեսած 1939 թ. : Քանի՞ տարի է անցել՝ 27 տարի. փո՞քր, ո՛չ, մեծ ժամանակամիջոց է, որ հնարավոր լիներ պատասխանել և այլևս կանխել նույն բանի կրկնությունները ամենուրեք: Ստրժիգովսկու աշխատության քննադատությունը գերմաներեն լույս է տեսել 1922 թվականին, ուղիղ 44 տարի առաջ, իսկ ո՞վ ծանոթացավ այդ քննադատությանը, նրա ճիշտն ու սխալը բացահայտելու համար: Հնարավոր է, որ կուլտի տարիներին այդ անելը կապված էր գոհողությունների հետ, բայց հնարավոր չէ՞ր նախապատրաստվել և հանդես գալ հետկուլտյան այս տասնչորսամյա ժամանակաշրջանում լույս աշխարհ բերվող ո՛չ փոքրաթիվ հրատարակությունների բավական հարմար առիթներով: Ոչ ոք չփորձեց մարտնչել հանուն սեփական ժողովրդի բարձր արժանապատվության, ազգային առողջ ինքնասիրության:

Թեպետ և որոշ ընկերներ ասել են իրենց խոսքը, բայց այդ խոսքը եղել է շատ ցածր, անլսելի. ասել են, բայց համառոտ, գործել են, բայց ոչ հետևողական՝ մինչև վերջ. անհանգստացել են, բայց միայն սեփական մաշկի ներսում: Այս գործում ոչ կազմակերպող է եղել, ուժերի մոբիլիզացնող ու ոչ էլ կա:

Թեպետ և մեր հանրապետությունը՝ ավելի ճիշտ, մեր ժողովուրդը ճանաչված է որպես շինարար, որպես ճարտարապետական հուշարձաններով հարուստ, հետաքրքիր պատմություն ունեցող ժողովուրդ, իրականում այս ամենից ավելի քիչ ունեցող ժողովուրդներ կան, որոնք իրենցը հրատարակում և ցույց են տալիս շատ ավելի պատշաճորեն, քան մեզ մոտ: Ուսանելի է Վրաստանի արվեստի ինստիտուտի գործունեությունը. այնպիսի մեծադիր, շքեղ, մեծաքանակ մենագրություններ են հրատարակում, այնպիսի ալբոմներ, բարի նախանձով ես լցվում:

Պատկերացնում եմ, մեզ մոտ դեռևս հրատարակված չէ Թորամանյանի չափագրությունների հատորյակը և նամականին:

Մեր հրատարակությունները գովելի սովորություն ունեն՝ հրատարակել և վերահրատարակել համաշխարհային մեծանուն գրողների գործերը: Վերջին տարիներին հրատարակվեցին մի քանի արաբ մատենագիրների գործերում հայերի մասին եղած տեղեկությունների ժողովածուն, թուրք պատմաբանների գործերում հայերի վերաբերյալ եղած տեղեկությունների ժողովածուն, ըստ որում, հատկապես այս վերջինում, գիտե՞ք ինչեր են գրված, թե ինչպես այսինչ ճակատամարտում որքան «անհավատներ» մորթվեցին, որքան երիտասարդ տղաներ և դեռատի աղջիկներ գերեվարվեցին, որքան ծեր ու մանուկ ոչնչացվեցին, որքան հարստություն թալանեցին, որքան տաճարներ ու ամրոցներ խորտակեցին, որքան գյուղեր ու քաղաքներ ավիրեցին, հրեճարակ դարձրին՝ տեղում մոխիր թողեցին:

Եվ ահա այսպիսի գրքեր էլ են լույս տեսնում, սակայն գիտե՞ք ինչպիսի գրքեր չեն թարգմանվում հայերենի ու ռուսերենի, որ կարդանք, ինքներս մեզ ճանաչենք ու ուրիշներն էլ ճանաչեն: Այդ ի՞նչու չեն հրատարակվում ժողովածուներ, որտեղ ամփոփված լինեն աշխարհի լուսավոր մարդկանց խոսքերը հայ ճարտարապետական արվեստի մասին: Շուրջ երկու հարյուր տարի է, որ այդպիսի նյութեր կան գրված եվրոպական լեզուներով, բայց հայ մարդը՝ ժողովուրդը տեղյակ չէ, մեր հարևան ժողովուրդները ևս: Կոնկրետանալով, պետք է անհրաժեշտ համարել 1967-1968 թվականների ընթացքում առանձին գրքով հրատարակել Իոսիֆ Ստրժիգովսկու «Հայկական ճարտարապետու-

թյունը և Եվրոպան» հայտնի և շատ արժեքավոր աշխատությունը, որի ռուսերեն թարգմանության ձեռագիրը կա: Ամեն մի հակառակություն այս գործի նկատմամբ պետք է համարել պրովոկացիա-զրպարտանք, քանի որ բացարձակ դեմոկրատիզմով տոգորված մարդը կարող էր նման գործ աշխարհ բերել, որպես խիզախ մարդ դեմ գնալ ժամանակի տիրապետող կարծիքին և թուրք բարբարոսների ոտքի տակ տրորվող, ուշաթափ մի ժողովրդի ստեղծած կուլտուրան բարձրացնել և ի լուր աշխարհի ասել, որ Եվրոպան քրիստոնեական ճարտարապետությունը սովորել է հայերից և այն ինչ արել են հայերը դարեր առաջ, հետո միայն արել են գերմանացին ու ֆրանսիացին և ուրիշ շատ կարկառուն ազգեր: Անհրաժեշտ համարել 1967-1969-70 թվականների ընթացքում առնվազն երկու-երեք ժողովածուներով մեր լայն ընթերցողին ներկայացնել այն ամենը, ինչ օտարները գրել են հայերի ճարտարապետության վերաբերյալ սկսած Դյուբուայից և ուրիշներից: Այս հրատարակությունները բոլորից լավ կպատասխանեն մեր արվեստի պատմության չարանենգ աղավաղողներին, կօգնեն մեր և մյուս ժողովուրդներին ճանաչելու և գնահատելու համաշխարհային կուլտուրայի գանձարանը հարստացնող մեր արժեքները:

Վերևում ասվեց, որ մեր ժողովուրդը աշխարհում շինարարի պատվավոր համբավ ունի, և այդ համբավը ստեղծվել է ռեալ հիմքի վրա: Ասելիքս այն է, որ հայ ժողովուրդի շինարարական կուլտուրայի անժխտելի վկաները մեր անթիվ հուշարձաններն են, մեր ժողովրդի պես սփռված աշխարհով մեկ: Թողնենք հեռավորները գիտնականների խղճին, խոսենք այն հուշարձանների գոյավիճակի և ապագայի վերաբերյալ, որոնք մեզ մոտիկ են, մեր աչքի առաջ, բայց դարձյալ անպաշտպան, անմխիթար, անհեռանկար: Խոսենք օրինակներով. աշխարհով մեկ հայտնի դարձավ, որ Երևանը 2750 տարեկան է, և շուտով նշելու ենք այդ նշանակալից տարելիցը: Իսկ ո՞վ է հաստատում այդ. Արինբերդը, պատմական Էրեբունին, որտեղ պեղումներ են կատարվում Կոնստանտին Հովհաննիսյանի ղեկավարությամբ, արդյունքները ավելի քան բավարար: Պեղումների ղեկավար ընկեր Հովհաննիսյանը միաժամանակ մեր պետշինի հնությունների պաշտպանության կոմիտեի նախագահն է: Եվ գիտե՞ք ինչ է

տեղի ունեցել. չարագործի մեկը, աշխատանքից անժամանակ հեռացված պահակը գաղտագողի այնտեղ ավերումներ է կատարել: Հոբելյանական օրերին աշխարհի բոլոր ծայրերից ժամանած հյուրերի աչքերում այդ հուշարձանի ժամանակակից վիճակը մեզ ոչ միայն պատիվ չի բերի, այլ նախատինքի առիթ կհանդիսանա:

Այժմ ուզում եմ օրինակներ բերել նաև եղբայրական Վրաստանից և Ադրբեջանից, այս ոչ թե նրա համար, որ որոշ մարդիկ զարմանան, մյուսները՝ անհարմար զգան, ո՛չ բոլորովին, այսպիսի հանդիսավոր օրը նման բաների համար չէ, այլ այն նպատակով, որ հնարավորին չափ ուշադրություն կենտրոնացվի, փրկվեն որոշ կարևոր հուշարձաններ:

Հենց միայն վերջերս իմացանք, որ Ախալցխայի մոտի, Ախալցխայից ոչ հեռու գերեզմանոցի հրաշալի խաչքարերը որոշ չարագործներ հերթով Կուր գետի բարձրադիր ափից լցնում են գետը՝ մասնում կորստի ու ոչնչացման:

Վրաստանի Գորիի շրջանում կա մի շատ հայտնի հուշարձան Աթենի անունով, որի մասին շատ գիտնականներ են աշխատություններ գրել: Համաձայն արձանագրության, որն առաջին անգամ դեռևս անցյալ դարի սկզբներում ընթերցել է Դյուբուան, կառուցել է հայազգի ճարտարապետ Թոդոսը: Համաձայն Ջավախաշվիլու այնտեղ գրված էր՝ «ես, թոդոս շինալ սրբոյ եկեղեցի»։ այժմ այս հայատառ արձանագրությունը չկա, չարագործները տաշել, վերացրել են այն, բայց ահա հուշարձանների պահպանության կոմիտեի ցուցատախտակում, որ փակցված է հուշարձանի պատին, ամեն ինչ գրված է, բայց կառուցող Թոդոսի մասին ոչինչ գրված չէ: Հայկական և վրացական շատ քիչ հուշարձաններ կան, թերևս չկան, որոնց վրա գրված լինի ճարտարապետի անունը. այս բացառիկ Թոդոսը ևս հավասարվում է նրանց: 1962 թ. լույս տեսած «Արվեստի հանրագիտարանում», «Վրաստան» բաժնում գրված են անվանի շուրջ 71 ճարտարապետների, քանդակագործների և նկարիչների անուններ՝ թե անցյալ, թե ներկա, սակայն Թոդոսի անունը չկա:

Ես ուզում եմ հավատալ, որ հուշարձանների պահպանության գործի ղեկավար հարգելի ընկեր Կանտելակին միջոցներ կձեռնարկի, որպեսզի, ինչպես ասվում է նման

դեպքերում, Աթենի տաճարի պատի վրա կրկնվի երբեմնի արձանագրությունը (առանց հնի հետքերը կորցնելու), որ նոր ցուցատախտակ փակցվի կառուցողի անվան նշումով, որ հաջորդ հրատարակություններում մյուսների թվում գրի առնվի նաև հազարամյակի խորքից մեզ հասած Թողոս ճարտարապետի անունը:

Հայտնի է, որ պատմական Ջուդա քաղաքից մնացել է աշխարհահռչակ մի գերեզմանատուն հազարավոր խաչքարերով, որոնցից ամեն մեկը, ինչպես հաճախ ասվում է, կարող է աշխարհի ցանկացած թանգարանին պատիվ բերել:

Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու համար մշակվել են նախագծեր առնվազն երկու տարբերակով: Տարբերակներից մեկի իրականացումով խաչքարերի այդ բաց թանգարանը մնում է անվնաս, մյուս տարբերակով՝ մնում է ջրի տակ. նույն բախտին է ենթակա Կարմիր վանքը: Ավելի քան մեկ, մեկուկես տարի առաջ այս մասին տեղեկացրինք պետշինին, այդ թվում հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ Հովհաննիսյանին, ասելով նաև, որ Աղաբաբյանը հանձնարարում է հետաքրքրվել այդ հարցով: Այս կապակցությամբ անհրաժեշտ էր կապվել Ադրբեջանի համապատասխան հիմնարկի հետ, միջոցներ ձեռնարկել, որ իրականացվեր հիդրոկայանի նախագծի այն տարբերակը, որով հուշարձանները մնում են անվնաս, արդյունքի չհասնելու դեպքում, պետականորեն կազմակերպել այդ հուշարձանների, այսպես ասած «էվակուացումը»: Ասում են, որ արդեն սկսվում են շինարարական աշխատանքները, բայց նախագծերից ո՞ր տարբերակով՝ չգիտենք: Դեռ ուշ չէ, եթե վճռականություն չցուցաբերենք, իրոք ուշ կլինի:

Մեր հանրապետությունում հուշարձանների պահպանության գործը անհրաժեշտության համեմատ անբավարար է, այսինքն՝ վատ է: Ըստ երևույթին անհրաժեշտ է վերանայել համապատասխան օրգանի մասշտաբները: Ինձ թվում է, որ գործի շահերը պահանջում են, որ այդ գործը գլխավորի ո՛չ թե գիտությամբ զբաղվող մարդը, որին անհրաժեշտ է խիստ կենտրոնացում իր թեմայում, այլ միայն և միայն հուշարձանների պահպանությամբ զբաղվող մի էնտուզիաստ, առավել հայրենասեր, առավել ձեռներեց և ճարպիկ մի մարդ, որին տանք և պահանջենք:

Եվս մի փոքրիկ հարց. հարցն իրականում փոքրիկ չէ, սակայն միշտ փոքրացվում է. այդ վերաբերում է ճարտարապետի դերին մեր կյանքում ու նրա նկատմամբ վերաբերմունքին առհասարակ: Այս երկու երևույթների միջև հակասությունների մի անդունդ է ստեղծվել ու այն գնալով խորանում է: Մեր միջնադարի կառուցողներից քչերին գիտենք, պատվիրատուներից՝ շատերին: Այդ բացատրվում է նրանով, որ պատվիրատուն կանխամտածված կերպով արգելում էր պատին դրոշմել կառուցողի անունը, որպեսզի գալիքը իրեն հիշի: Մեր օրերում պատվիրատուն մեր հարազատ պետությունն է, նոր երևույթ, բայց ի՞նչու մոռացվողը հնի ձևով նորից ճարտարապետն է ու կառուցողը:

Հյուրեր են գալիս, նշում են, որ մեր քաղաքը ներկայացնում է մեր կուլտուրայի դեմքը, այն յուրահատուկ է օրիգինալ, գովելի, բայց գրքեր են գրվում, զեկուցումներ արտասանվում, պատիվներ տրվում բոլորից քիչ քաղաքը ստեղծողներին: Վերցրեք այս թեմային վերաբերող գրքերը, նույնիսկ վերջերս հրատարակված ընկ. Ս. Մովսեսյանի «Հայաստանը երեկ, այսօր, վաղը» աշխատությունը: Չենք կարող պահանջել, իհարկե, որ այնտեղ ճարտարապետների մի ցուցակ կցվի, բայց խոստովանենք, որ նշված անունների ստեղծագործությունները բավարար չեն մեր ճարտարապետության դեմքը որոշակի դարձնելու տեսակետից: Նման գործում խստությունը լավ է, բայց ժլատ լինելը՝ ոչ:

1966 թ., դեկտեմբեր